

Δωδιαζήπη ή αρη περι

Worship

Ծարագրելու «Krtutiun» (education) weekly «Կրտստոն» (образование) еженедельник 21.07.2021թ. չորեքշաբթի թիվ 29 (1002)

Դասագիրք

Կերեւի լուսանկարում պատկերված են նմուշներ հայ ճատենագիտության գանձերից: Ժամանակին դրանք եւ դասագիրք էին, եւ գրականություն, բռվանդակում էին փիլիսոփայություն, կրոն, թերականություն, պատմություն... Այսօր դրանց հոգեւոր պարունակությունը հանրության համար ունի լոկ խորհրդանշական իմաստ եւ լավագույն դեպքում կիրառական է միայն մասնագետների շրջանում: Բնակա՞ն է դա, արդյոք: Եւ այո, եւ ոչ: Անշուշտ, ժամանակների հոլովույթում գրչությանը փոխարինեց տպագրությունը, ի հայտ եկան գրամեքենան, հիմա արդեն համակարգիչը, փոխվեց մարդու միջավայրը, ընդլայնվեց հարաբերությունների եւ շփումների աշխարհագրությունը... Մարդն այսօր հաղորդակցվում է հարյուրավոր լեզուներով, ողջ մոլորակը, տիեզերի մի զգալի հատված նրա մտավոր գործունեության դաշտն է ու առարկան... Բայց որքանո՞վ է փոխվել մարդն ինքնին. իր խոհերով, զգացումներով, հոգեւոր ու մարմնական պահանջմունքներով: Թերեւս՝ ոչ զգալիորեն: Դարձալ իր կյանքի արշալույսին, որոշակի մի տարիքում դառնում է աշակերտ ու սկսում իր ուսումն «այր» ու «բեն»-ից, այնպես, ինչպես դարեր առաջ... Ու կրկին ձեռքն է վերցնում տվյալ առարկայի դասագիրքը... Եւ եթե հարյուրամյակներ առաջ այդ դասագիրքը հայ երեխայի համար «Աստվածաշունչ» մատյանն էր, Խորենացու «Հայոց պատմություն»-ը, Անհաղի «Սահմանը ինաստասիրությանց»-ը, Շիրակացու «ԹՎարանություն»-ը, ապա այսօր թվարկված գլուխգործոցները տառածանազ հայ մարդուն իրամցվում են հասուն պատանեկան կամ արդեն երիտասարդական տարիքում... Դայ երեխա՞ն է դարձել նվազ ընդունակ, թե՞ դասական դասագրերն են հնացել... Ոչ մեկը, ոչ էլ մյուսը. որովհետեւ, պարզից էլ պարզ է, դասական արժեքներն ընդհանրապես չեն հնանում, իսկ հայ երեխաների մեջ շնորհալիները երեւէ չեն պակասելի... Ուրեմն դարձալ ճակատագիր՝ ափիտի մեղադրենք, քաղաքական անցուղարձերո՞վ պայմանավորենք մեր նահանջը, հեռանալը հայ դասական դպրության, հայ ազգային մանկավարժության արժեքներից ու սկզբունքներից... Նոր ժամանակներում լուսավորյալ Եվրոպան շարունակեց դավանել վերածննդի գաղափարական սկզբունքները. յուրաքանչյուր ժողովուրդ նորովի զարգացրեց իր ավանդույթները՝ երեւէ չկտրվելով իր արմատներից: Մենք էլ: Բայց որոշակի զիջումներով: Մասնավորապես՝ ռուսական, առավել եւս՝ խորհրդային ժամանակներում, երբ ստիպված էինք Մակարենակո եւ Սոլխումլինսկի կարդալ, թարգմանել, երբեմն էլ՝ արտագրել... Դա դեռ ոչինչ. բա որ դասագրքերն էին նույնական... Ե՛, կասի ընթերցողը, փառք Աստծո, արդեն 30 երկար ու ծիգ տարիներ թոքափել ենք խորհրդային լուծը: Իսկ մենք կշարունակենք փոքր-ինչ հորեւտես մնալ եւ ասել, որ հայ նորագույն մանկավարժությունը, աննշան բացառություններով, շարունակել է մնալ խորհրդային, իսկ վերջին տարիներին էլ՝ արդեն արեւմտյան մանկավարժության մի ծյուղը՝ մոռանալով եւ Ուկեղար, եւ Դայկական ռենտանս, եւ Գլածոր, եւ Տարեւ... Չթվարկենք, միայն մեր պարտքը համարենք հիշեցնել, որ լավ դասագիրքը մի ամբողջ մանկավարժություն արժէ, ինչպես որ լավ ու սուցիչը՝ մի ամբողջ դպրոց դպրոց... Չշտապենք, իբրեւ թե



բարելավելու նպատակով, գործածությունից հանել
մեր լավագույն դասագրքերը, որ տասնամյակների,
հարյուրամյակների քննությունն են քրնել: Նաեւ չվա-
խնանք տեղ տալ եկող նորին, եթե ծառից հեռու չընկ-
նող պտուղի պես մերն է, մեր դպրության հիմնարար,
անկյունաքարային սկզբունքներով ստեղծված: Հսկա-
յական ժառանգություն ունեցող ժողովուրդը, այն էլ
համաշխարհային քաղաքակրթության մեջ նման
ներդրում ունեցած, իրավունք չունի իր պետականու-
թյունը Վերակագնելուց 30 տարի անց իր դասագրքե-
րը թարգմանելու, փոխադրելու, պատճենելու, լավա-
գույն դեպքում կառուցելու օտար մանկավարժության
մերողությանը ու սկզբունքներով: Դասագրքաս-
տեղծ չափազանց կարեւոր գործում մեզ կարող են լա-
վագույնս օգնել ներ ավանդույթները, մանավանդ, որ
օտարի բազմաթիվ լավագույն դրսեւորումները հենց
մեր իսկ անցյալում ունեցածի պատճենումներն են:

4.U

Նոր տարեշրջան-1000



Խրախուսվել են
շնորհակալագրով

Երկարամյա բարեխիղը աշխատանքի համար եւ «Կրոռություն» շաբաթաթերթի նոր տարեշրջանի 1000-րդ հորեւյանական հանարի թողարկման կապակցությամբ «Կրոռություն» շաբաթաթերթի ներդրությալ աշխատակիցները ՀՀ ԿԳՄՍ նախարարի պաշտոնակատար Վահրամ Դումանյանի հրամանով խրախուսվել են Յայաստանի Յանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության շնորհակալագրով.

1. Հրաշյա Սերյոժայի Բալոյան - գլխավոր
խմբագրի տեղակալ
 2. Լուսաբեր Գառնիկի Գալստյան - լրագրող
 3. Նաիրա Վիկտորի Թադեևոյան - լրագրող
 4. Արի Նորիկի Սահոյան - գրոքավար:

Լուսավորելով գալիք սերունդների ճանապարհը

«Կրություն» շաբաթաթերթի հարգարժան խմբագիր եւ խմբագրակազմ,

«Ուրարտու» համալսարանի ողջ պրոֆեսորադասախոսական կազմի եւ իմ անունից սրտանց շնորհավորում ենք՝ թերթի հոբելյանական՝ նոր տարեշրջանի 1000-րդ համարի լույս ընծայման առջիկ: «Կրթություն» շաբաթաթերթը տասնամյակներ շարունակ կատարում է անփոխարինելի եւ Նվիրական գործ կրթական ոլորտում: Մենք մեր շնորհակալական խոսքն ենք հղում Ձեզ՝ տարիներ շարունակ կրթությանը համընթաց քայլելու, բնագավառի խնդիրները բարձրածայնելու եւ լուրջ վերլուծությունների համար: Այս ամենի հետ մեկտեղ՝ դուք հնարավորություն եք տալիս բանինաց գիտնականներին իրենց փորձը հաղորդելու մեր համրությանը: Մենք գիտենք, որ յուրաքանչյուր երկրի ապագան պայմանավորված է կրթական մակարդակով: Զեր տասնամյակների ակտիվ եւ արգասաբեր գործունեությունը թող բազմապատկվ՝ լուսավորելով գալիք սերունդների ճանապարհը:

Ա. Ա. ՍԵՐԱԿՅԱՆ

«Ուրարտու» համալսարանի ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱԼՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՅ ԿԳՄՍ նախարարի
պաշտոնակատար **Վահ-
րամ Դումանյանի** հրամա-
նով՝ հանրակրթական ու-
սումնական հաստատու-
թյան դեկավարման իրա-
վունքի (հավաստագրի)
համար քննությունների
կազմակերպման եւ անց-
կացման նախապատրաս-
տական աշխատանքները
կազմակերպելու նպատա-
կով նախարարության Անձ-
նակազմի կառավարման
վարչությունը 2021 թ. հու-
լիսի 20-ից կընդունի հա-
վակնորդների փաստաթ-
թերու:

Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ձեռք բերելու համար հավակնորդներն անհրաժեշտ փաստաթղթերը կարող են Անձնակազմի կառավարման վարչություն ներկայացնել 2021 թ. հուլիսի 20-ից օգոստոսի 9-ը ներառյալ՝ ժամը 09.00-ից 16.00-ը (բացի շաբաթ եւ կիրակի օրերից):

ՀՅ ԿԳՄՍՆ Դասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչություն

Մայր Աթոռ

Ուսանողները՝ Վեհարանում

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ
Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Եջմիածնում հյուրընկալեց Հայաստանի Ազգային պոլիտէկնիկական համալսարանի ուսանողական խորհրդի անդամներին:

Հանդիպմանը խորհրդի նախագահ Գեորգ Չարությունյանը, իր որդիկան խոնարհումը թերելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին, շնորհակալություն հայտնեց Մայր Աթոռի հարկի ներքո ՀԱՊԴ սաներին ընդունելու համար, ապա անդրադարձավ ուսանողական խորհրդի գործունեությանը՝ մասնավորապես տեղեկացնելով, որ արցախյան պատերազմից հետո խորհրդարձ փոխել է իր ռազմավարությունը եւ իրականացնում է նահատակների եւ վիրավոր զինծառայողների ընտանիքների աջակցությանը եւ ուսանողների ռազմահայրենասիրական կրթության ուղղված ծրագրեր: Ուսանողական խորհրդի նախագահը այս առունով մեծապես կարեւորեց խորհրդի առաքելության մեջ գործակցությունը Հայաստանյաց Առաքելական Սույնը Եկեղեցու հետ:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ջերմորեն ողջունեց ուսանողներին՝ հայտնելով, որ նրանց այցը Մայր Աթոռ Հայոց Հովվապետի համար քաջալերանք է եւ բերկրանքի առիթ: ՀԱՊԴ ուսանողական խորհրդի հետ Վեհափառ Հայրապետը հան-

የካዃቤት ከያ ብሔር 2019 ወቅልኩን
ጥቃቅስተምቶችን:

Անդրադառնալով մասնավորապես արձակուրդային շրջանում իրականացվելիք ծրագրերին՝ Դայոց Հովկապետը գովեց Երիտասարդների հայրենասիրական ողին, պատերազմում զոհված հայորդիների հիշատակը վար պահելու իրենց նախաճաշխնդիր կեցվածքը՝ ընդգծելով, որ այդպիսի գիտակցությամբ առաջնորդվող սերունդը պիտի կարողանա իրականություն դարձնել մեր ժողովրդի իղձերը, կերտել հայրենիքի անվտանգ ու խաղաղ կյանքը:

Խոսելով արցախյան պատերազմի հետեւանքով հայ ժողովով կը կրած կորուստների մասին՝ Նորին Սրբությունը հորորդեց Երիտասարդներին չփառվել, մարտահրավերների առջեւ չնահանջել, այլ հետամուտ լինելով իրենց ուսումնառությանը, իրենց գիտելիքներով եւ հմտություններով լօվել հայրենաշխնության գործին՝

այդպիսով հավերժացնելով նաեւ իրենց զոհված դասընկերների հիշատակը եւ դառնալով քաջալերանքի ու հույսի աղբյուր կորստյան դառնությունը ճաշակած քայլում ընտանիքների համար:

Յայոց Յայրապետը երիտասարդներին պատգամեց փարված ննալ հայրենիքին, հայրենի հողին ու Սուլը Եկեղեցուն, փարված ննալ ազգային ու հոգեւոր արժեքներին, որոնցով ազգը հայոց

ծեր ուսուցիչներին: Առանց նրանց ամենօրյա աշխատանքի եւ Նվիրումն՝ հնարավոր չէր լինի հասնել նման արդյունքի: Խոնարիվում են մեր բոլոր ուսուցիչների առջևեւ: Յանկանում են, որ նրանք ծշտապես տեսնեն իրենց աշակերտների նմանորինակ ձեռքբերումները, իսկ մենք պետք է գործադրենք անհրաժեշտ ջանքեր, որպեսզի ուսուցիչը ծշտապես լինի բարձունքում, իսկ ուսուցիչ աշխատանքը դառնա գերազույն եւ ինչ-որ տեղ դժվարահաս կարգավիճակ»:

ԿԳՍՍ նախարարի տեղակալ
Ժամանա Ազգութեայսանը եւս համոզ-
մունք է հայտնել, որ մեղալակիր
շրջանավարտների ձեռքբերում-

Ները շարունակական են լինելու. «Սիրելի՝ շրջանավարտներ, շնորհավորում եմ այս կարեւոր արդյունքի համար: Վերջին ուսումնական տարիները բավականին բարդ պայմաններում անցան: Ծառ ուրախ եմ, որ չնայած բոլոր մարտահրավերներին՝ կարողացել եք ավարտին հասցնել ձեր սկսած կարեւոր գործը: Կատար եմ բոլոր մեծամեծ ձեռքբերումներ եք ումենալու եւ նոյն հաջողությամբ ստվորելու եք նաեւ մասնագիտական կրթության շրջակիւլում: Կանենք առավելագույնը, որպեսզի նպաստենք ձեր կյանքի հաջորդ փուլերում ավելի մեծ հաջողությունների գրանցմանը»:

Նախորդ տարի գերազանցության մեղալ ստացած շրջանա-

A black and white photograph of three individuals standing in front of a backdrop. On the left, a man in a dark suit and patterned tie stands with his hands at his sides. In the center, a young woman in a white blouse and dark skirt holds a small framed certificate or award. On the right, another woman in a dark dress with a long necklace stands with her hands clasped. The background features a repeating watermark of the "MINISTRY OF EDUCATION, CULTURE AND SPORT OF RA" logo.

Վարտներից 4-ը պարզեւատրման
արարողությանը ճասնակցում էին
արդեն զինվորի կարգավիճակով։
Վահրամ Դումանյանը նրանց թեմ
է հրավիրել եւ առանձնահատուկ
շնորհակալություն հայտնել։
«Դպրատանում ենք բոլորովզ,
սակայն այս տղամերն առանձնա-
կի շնորհակալության են արժանի։
Դուք մեր պարծաճըն եք։ Զեզ խա-
ղաղ ծառայություն եւ քաջառող-
ջություն են մաղրում։ Մենք մշտա-
պես ձեր կողմին ենք»։

Պարգևեատրման արարողության ավարտին ԿԳՍՍ նախարարի պաշտոնակատար Վահրամ Դումանյանը պատսականել է ներկաներին հետաքրքրող հարցերին, որոնք մեծապես վերաբերել են կրթության ոլորտի բարե-

փոխումներին, բուհերում նոր
մասնագիտությունների ներդր-
մանը:

«Կրթական բարեփոխումները
մեզ համար ունեն ռազմավարա-
կան նշանակություն, սակայն
պետք է հասկանալ, որ այսօրվա
փոփոխությունների արդյունքնե-
րը տեսանելի կլինեն որոշ ժամա-
նակ անց: Սա տեսական գործըն-
թաց է: Կրթության ոլորտը շատ
զգայուն համակարգ է, որտեղ չի
կարելի ցուցաբերել շտապողա-
կանություն եւ կատարել տարա-
տեսակ փորձարկումներ»,- ասել է
Վահրամ Դումանյանը եւ Վաստա-
հեցրել, որ նախարարությունն
անում է առավելագույնը՝ խնդիր-
ներին արդյունավետ եւ նպատա-
կային լրացում տալու համար:



միշտ եղել է զորեղ ու միասնական եւ այդպիսին կլինի նաեւ ապագայում:

Այսուհետեւ Ամենայն Հայոց
Կաթողիկոսը պատասխանեց ու-
սանողներին հուզող հարցերին,
որոնք հիմնականում վերաբերում
էին արդի աշխարհի փոթորկալի
իրողություններում եւ քաղաքա-

Կան զարգացումներում քրիստոնյայի կերպարի պահպանությանը, հոգեւոր կյանքի փորձություններին, ճաւեւ տարբեր կրօնական կազմակերպությունների եւ հա-

Կազմակերպությունների վերաբերյալ
Հանվանությունների վերաբերյալ
Հայոց Եկեղեցու դիրքորոշմանը
Վերջում Ամենայն Հայոց Կաթողի-
կոսն իր օրինությունն ու բարե-

մաղթանքները փոխանցեց Հայաստանի Ազգային պոլիտեխնիկական համալսարանին՝ վերստին կարեւորելով նման հանդիպումները:

Հանդիպումից հետո ՀԱՄԴ ու-
սանողական խորիրդի անդամ-
ներն այցելեցին Վեհարանի թան-
գարան:



ՀՆԱՐԴԱՎՈՐ Ե'
ՆԱՎԹԻՆ ԵՒ ԳԱՂԻՆ ՓԻԼԻԱՐԻՆԵԼՈՒ ԳԱ ԶՐԱԾԻՆՈ

Երեւանի պետական համալսարանի Կենսաբանության ֆակուլտետի թիմի ներկայացրած «Թափոններից՝ կենսաջրածին» ստարտուփ նախագիծն արժանացել է «Climate Change Tech Accelerator» արսելերացիոն ծրագրի մրցանակին: Ծրագրի նպատակն է աջակցել այն ստարտափներին, որոնք առաջարկուում են կլիմայական ռեսուրսների արդյունավետ կիրառման նախագծեր: Արցույթի առաջին փուլին նաևնակցել է աշխարհի ավելի քան 30 թիմ: Կենսաբանության ֆակուլտետի թիմի առաջարկած նախագիծը դարձել է երկու մրցանակային տեղերից մեկի հաղթողը՝ ստանալով իննու հազար ամերիկյան դոլարի չափով դրամաշնորհ:

ԵՐԿ մանրէաբանական կենսա-
տէխնոլոգիաների եւ կենսավառելի-
քի նորարարական կենտրոնի թիմը
ներկայացրել են կենսաքիմիկոս,
մանրէաբան, կենսաբանական գի-
տությունների թեկնածու եւ թիմի
ավագ՝ **Սարենիկ Միրզոյանը**, ինչ-
պես նաև ֆակուլտետի մագիստրոս-
ներ ու ասպիրանտներ **Լիանա Վան-
յանը**, **Յեղինե Գեւորգյանը** եւ **Յոհիվ-
սիմե Պետրոսյանը**: Թիմի հիմնադի-
րո եւ խորհրդատուն է Եղել կենտրոնի
տնօրեն, ներկայում ԿԳՍՍ նախարա-
րի տեղակալ **Կարեն Թոշումյանը**:

Սեզ հետ զրոյուղում Սաբենիկ Միջոցանն ասում է, որ Կենսաբանության Փակուլտետի թիմի ներկայացրած նախագիծն առաջարկվել է տեխնոլոգիա, որի միջոցով տարրեր թափունենի կիրառումից ստացվում է կենսաջրածին, ինչի շնորհիկ է կառույթի էկոլոգիապես նաքուր ճանապարհու ստանալ էլեկտրականություն: «Ինչպես գիտեք, բնակչության թվաքանակը գնալով աճում է: Ներկայում բնակչության տարեկան աճը կազմում է 1.7%. յուրաքանչյուր շաբաթ մարդկության թվաքանակն աճում է 1.7 մլն-ով: Օրական աճը կազմում է 247000 մարդ, իսկ 1 ժամում՝ 10270 մարդ: ԱՄԿ-ի գնահատմանը՝ Երկրի բնակչությունը 2100թ.-ին կկազմի մոտ 12 մլրդ մարդ: Այս մի փոքր վախճանող թվերից արդեն պարզ է, որ Վառելիքի բնական պաշարները պարզապես կարող են չքավարարել մարդկության պահանջները: Ուստի, գիտնականներն արդեն սկսել են վառելիքի այլընտրանքային ուղիներ փնտրել: Զրածինը էկոլոգիապես նաքուր, արդյունավետ եւ վերականգնվող վառելիք է, որը կարող է արտադրվել տարրեր ուղիներով՝ ներառյալ որոշ շատ հետաքրքիր կենսաբանական ուղիներ: Որպես ջրածին «արտադրողներ»՝ այսօր գիտնականների ուշադրության կենտրոնում են գտնվում բակտերիաների որոշ խմբեր: Այս բակտերիաները «սնվում ենե, այսինքն՝ յուրացնում են իրենց անհրաժեշտ սննդանյութերը եւ նյութափոխանակության ընթացքում դրանցում առկա տարրերը, մասնավորապես, շաքարները, օքսիդացնում են մինչեւ ածխաթթու զարդ եւ մոլեկուլային ջրածին, ինչն էլ մեծ պետք է: Ամենահետաքրքին այն է, որ բակտերիաների այս նյութափոխանակային առանձնահատկություններն օգտագործելով՝ կարող ենք ջրածին ստանալ նաև տարրեր թափուներից օրինակ՝ գինու, գարեջրի, սպիրտի արտադրության, սմուդային եւ այլ:



Ներկայումս հետազոտողները փորձում են գենային ինժեներիայի միջոցով այնպես փոխել բակտերիաների գենոմը, որ նրանք ավելի շատ ջրածին արտադրեն: Արդյունքում ստացվում է, որ եթե որպես հումք օգտագործենք բափոնները եւ այնպիսի բակտերիաներ կիրառենք, որոնք հեշտ են աճում եւ խիստ պայմաններ չեն պահանջում (օրինակ՝ ալիքային ցուպիկը), ապա մեր արտադրությունը նաև շատ մատչելի կլիման: Չնորոշանք նաև, որ ջրածինն այրվելիս առաջացնում է միայն ջուր, ուստի լրիվ էկոլոգիապես մաքուր վառելիք է, եւ նրա այրումից առաջացած էներգիան մոտ 3.5 անգամ շատ է նավթի էներգիայից: Ներկայում ջրածինի համաշխարհային տարեկան արտադրությունը 50 մլն տոննայից ավելի է: Այսպիսով, շատ շուտով հնարավոր է նավթին եւ գազին փոխարինելու գամեր շատ սիրելի բակտերիաների կողմից արտադրվող ջրածինը», - ներկայացրած ասաւով է Աստրենին:

հետ զրոյցուն ասուն է Սաթենիկը:
Նրա խոսքով՝ իր թիմը գիտական
տարրեր ուսումնասիրություններ են
իրականացնում այս թեմայով, եւ
իրենց առաջարկած տեխնոլոգիան
հիմնված է գիտահետազոտական
տարրեր փորձերի վրա: Սաթենիկը
վստահեցնում է՝ ազդեցության
բարձր գործակից ունեցող միջազ-
գային ամսագրերուն այդ թեմայով
ունեն բազմաթիվ տպագրված գի-
տական հոդվածներ:

«ԱՍԽԵՐՔԵՆԻ է, որ չկա արտադրություն՝ առանց բափոնների: Տարեկան բափոնների ծավալները հասնում են միլիարդավոր կիլոգրամների, ինչը լուրջ է կոլոգիական խնդիր և առաջացնում: Կան որոշ ընկերություններ, որոնք կիրառելով բափոններից էներգիայի ստանալու տեխնոլոգիաները, օգտագործում են օրգանական բափոններ կենսագազի, կենսաթանողի կամ կենսաբութանողի արտադրության համար, բայց H2-ը, համեմատած այլ վառելիքների, ամենամեծ ներուժն է առաջարկում. այն ամբողջությամբ է կոլոգիական մա-

բոլոր է եւ վերականգնվող: Սենք առաջարկում ենք կենսացրածին ստանալ արտադրական, գյուղատնտեսական, ինչպես նաև առօրյայում առաջացող սննդային թափուններից: Միկրոորգանիզմները կարող են յուրացնել տարրեր օրգանական թափուններ եւ արտադրել կենսացրածին, իսկ օրգանական թափուններ առաջանում են արտադրության գրեթե բոլոր ճյուղերում: Բացի այդ՝ H2-ի օքսիդացումից առաջանում է միայն ջուր, եւ այն կարող է անվերջ ար-

տաղրպել բակտերիաներում։ Մենք հատկապես կենտրոնացած ենք գաղթագործական ըմկերությունների վրա։ Դրամբ մեզ հետ միասին հանդիսանական է կողոգիական խնդրի լուծման համար եւ կատեղծեն իրենց վերականգնվող ու էլուրարեկանական էներգիան։»- նշում է մեր գորուցակիցը եւ հավելում, որ թափոններից կենսաջրածնի արտադրությունը ներկայում գտնվում է աթեստավորման փուլում։ Նրա խոսքով՝ մոլեկուլային ջրածինը՝ որպես այլ լրնտրանքային, էկոլոգիապես ճաքուր եւ վերականգնվող էներգիայի աղբյուր, հիանալի լուծում է նաեւ օդի աղտոտման եւ գլոբալ տաքացման դեմ։ Սաքերիկ զստահեցնում է մրցանակը կօգնի հետազյում տեխնոլոգիան առավել լայնամասշտար փորձարկել եւ այն ավելի արդյունավետ դարձնել։

Նշենք, որ ԵՊՀ մասնէաբանական կենսատեխնոլոգիաների եւ կենսավառելիքի նորարարական կենտրոնի թիմը «Green AgriTech Startup Clash 2021» մրցույթում եւս ստացել է մրցանակ՝ ներկայացնելով «MiCoFee» օրգանական պարարտանյութի ստարտուփ նախագիծը: Նախագիծը առաջարկում է նորարարական արտադրանք, որտեղ կիրառվում են օգտագործված սոլրի մնացորդները եւ հայաստանի հռետից մեկուսացված այնպիսի մանրէներ, որոնք ենդեմիկ են եւ կարող են որպես կենսապարարտանյութ ծառայել: Տեխնոլոգիան մշակվել է եւ ա-թերավիլուսանցել լաբորատոր պայմաններում: Լաբորատորից կիսապրոյունաբերական փորձարկումների բարեհաջող ընթանալու դեպքում այն կարելի է տեղափոխել արտադրական մեծամասշտար արտադրության փորձարկման՝ համապատասխան ֆինանսավորման ռեկայսերական մեջքում: Որպես նախագիծ վերջնարդունք՝ թիմն ակնկալում է ստանաթափոնների վերամշակման հիմքունիարժեք օրգանական պարարտանյութ:

Հավելենք, որ ԵՊՀ մասնէաբանական կենսատեխնոլոգիաների եւ կենսավառելիքի նորարարական կենտրոնը նորարարությունների մոցակցային հիմնադրամի դրամաշնորհով ստեղծվել է ԿԳՄՍՍ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի «Կրթուրյան բարելավում» ծրագրի շրջանակում՝ ՀՀ կառավարության ԵՊՀ-ի եւ Համաշխարհային բանկի համաֆինանսավորմաբ:

ՀԵՂԻԱՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Զգալում է ուսենալ ուսուցիչների ուժեղ համայնք

Ազնեն տարի «Այր» կրթական հիմնադրամը կազմակերպում է դպրոցական զանգվածային մրցույթներ՝ միավորելով հազարավոր աշակերտների եւ ուսուցիչների: Այրական մրցույթներում աշակերտների հաջողությունները նրանց ուսուցիչների աշխատանքի լավագույն գնահատականն են, եւ «Այր»-ն այս անգամ համախմբել էր «Կենգուրու» եւ «Սեղու» մրցույթներում լավագույն արդյունքը ցուցաբերած աշակերտների ուսուցիչներին ամբողջ Հայաստանից: Դանդիպանամ համակարգող, «Այր» կրթական հիմնադրամի գործադիր տնօրեն **Սոնա Կոչեցյանը** միջոցառման մեկնարկին ողջունեց ուսուցիչներին՝ նշելով, որ հանդիպանամ նպատակն է կրթության համար բավականին բարդ տարրավա ավարտին ուսուցիչների ունեցած մեծ ավանդը գնահատել եւ ցույց տալ, որ «Այր»-ը կարեւորում է ուսուցիչների հետ համայնքաստեղծ եւ ոգեւորող հանդիպումները:

Հանդիպմանն առցանց միացավ ԿԳՄՍ փոխնախարար **Ժաննա Անդրեասյանը**, ով փոխանցեց նախարարության շնորհակալությունը նման հանդիպում-քննարկում կազմակերպելու եւ իրենց դրա մաս դարձնելու համար, քանի որ կրթության ոլորտում իրականացվող փոփոխություններն անհնար կլինեն առանց դրանում ներգրավված ուսուցիչների եւ գործնկերների: Ժաննա Անդրեասյանն ընդգծեց, որ կարեւոր էր անցնող տարրում «Այր»-ի կողմից զանգվածային մրցույթներն առցանց հարթակ տեղափոխելը, ինչպես նաև տեղեկացրեց, որ ուսուցիչների շնորհվող տարրակարգերի մեջ այսուհետ դիտարկելու է նաև ուսուցչի «Մեղու» եւ «Կենգուրու» մրցույթներում հաղողությունը եւ մրցանակակիր աշակերտներ ու ունենալու հանգամանքը: Փոխնախարարը նաև կարեւորեց այս տարի մեկնարկող հանրակրության պետական եւ առարկայական նոր չափորոշիչների Տավուշում փորձարկման գործընթացը եւ դրանում «Այր»-ի գործուն մասնակցությունը:



«Այր»-ի գործընկեր ուսուցիչներին ողջունեց նաև մրցույթների բաժնի դեկավար **Տարել Աղամյանը**, որը նշեց, որ անցնող տարին բավականին մարտահրավերային էր «Այր»-ի զանգվածային մրցույթների համար, որոնք հաճախակի պայմաններում դարձան առցանց եւ անհնար կիրակեն առանց ուսուցական մեր հաճայնքի ակտիվ մասնակցության եւ մեր գործընկերների աջակցության:


Հարունակությունը՝ Էջ 6



Զգտում Ե ուսենալ ուսուցիչների ուժեղ համայնք

սկիզբան՝ էջ 5

Հանդիպումը շարունակեց պանելային քննարկումը, որի խոսնակներն էին Կրթության զարգացման եւ նորարարարության ազգային կենտրոնի Կրթության բովանդակության վաշչության պետ Գագիկ Մելիքյանը, «Այր» դպրոցի գործադիր տնօրեն Դավիթ Սահակյանը եւ «Այր» կրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արամ Փախչանյանը:



ԿԶՆԱԿ-ի ներկայացուցիչը խոսեց ԿԳՍՍ նախարարության նախաձեռնած փոփոխությունների մասին՝ նախանդարադարձանալով՝ այս տարի մեկնարկող հանրակրթության պետական եւ առարկայական չափորոշչինների փորձարկմանը, ապա ուսուցիչների կողմից կատարվող գնահատման կարգի փոփոխությանը, իսկ վերջում՝ այն փոփոխությանը, որը լինելու է ուսումնական պլանների կազման ժամանակ՝ նշելով, որ դպրոցներին տրվելու է լայն ազատություն՝ հենքային ուսումնական պլանի շրջանակում սեփական ուսումնական պլանը կազմելու համար։ Պանելային քննարկման հաջորդ խոսնակը՝ Դավիթ Սահակյանը, իր ելույթում նշեց դպրոցի բաց կառույց լինելու անհրաժեշտության եւ հասարակությունից անջատ չլինելու կարեւորության մասին եւ որ դպրոցի կյացման համար անհրաժեշտ է գործընթացում ներգրավված բոլոր կողմերի՝ ուսուցիչների, ծնողների, շրջանավարտների, ինչպես նաև դպրոցը շրջապատող միջավայրի՝ բիզնես ոլորտի, ՀԿ-ների եւ պետության համագործակցությունը։ Խոսնակ Արամ Փախչանյանն էլ անդրադարձավ 21-րդ դարի ընճեռած հնարավորությունները խելամիտ օգտագործելու կարեւորությանը՝ նշելով, որ առանց տեխնոլոգիաների կրթությունն այսօր անհնար է, միեւնույն ժամանակ՝ եթե նոր տեխնոլոգիաները խելամիտ չներդրվեն, ապա մենք կունենանք քիչ սովորող եւ շատ զվարճացող աշակերտներ։

Պանելային քննարկման ավարտից հետո «Քան» ակադեմիայի հայաստանյան գրասենյակի ղեկավար **Անուշ Ավագյանը** ուսուցիչներին ծանոթացրեց բոլորին անվանագիր և հասանելի կրթությամբ ապահովող այս հարթակի ոճեթագ հմարանիոնությունը Յներին:

Ուսուցիչների հետ հանդիպումը շարունակեց «Այր»-ի մրցույթների գործընկեր Telcell հ ներկայացուցիչը, որը ներկայացրեց Telcell wallet-ի հնարավորությունները, որոնցով «Այր»-ի զանգվածային մրցույթների գրանցումն ու վճարումն իրականացվում է առցանց շատ հեշտ եւ առաջ:

Հանդիպման ավարտին «Այբ» հիմնադրամի տնօրեն Սոնա Կոշեցյանը եւ մրցույթների բաժնի ղեկավար Տարեն Աղամյանը շնորհակալագրեր եւ խրախուսական նվերներ հանձնեցին «Կենգուրու» եւ «Մեղող» մրցույթներում հաղթող եւ մրցանակակիր աշակերտներ ունեցած ուսուցիչներին՝ եւս մեկ անգամ շնորհակալություն հայտնելով նրանց աշակերտների կայացման գործում կարեւորագույն մասնակցություն ունենալու համար:



Աշխատանքի վրա հիմնված ուսուցումնական աստիճանաբար Մտնում է քոլեջներ

Աշխատանքի վրա հիմնված ու-
սումնառությունն (ԱՐՈՒ) աստիճանա-
բար մտնում է նախնական եւ միջին
մասնագիտական կրթության ոլորտ
«ԵՄ-ն հանուն երիտասարդության
ՍԵՅ ԵՄ. հմտություններ աշխատանքի
համար» ծրագրի բաղադրիչներից մե-
կը ՍԿՈՒ համակարգում բարեփոխում-
ների իրականացումն է: Դրա շրջանա-
կում մշակվել է աշխատանքի վրա
հիմնված ուսումնառության մերողա-
բանությունը եւ ՀՀ 3 մարզի 4 քոլեջնե-
րում ներդրվել փորձնական կարճա-
ժամկետ ԱՅՀ ուսուարիք:

Աշխատանքի վրա հիմնված ուսումնառության արդյունքների շուրջ գրուցել ենք «Գլոբալ զարգացումներ» հիմնադրամի տնօրենի տեղակալ Լիիհ Բեօւարուանի հետ:

ԱՐՈՂ Բաղդադի համար կուտանք է պատճենաբառ և պատճենագույն ապահովությունը կազմում է 15-35 տարեկան երիտասարդների համար եւ խթանել նրանց զբաղունակությունն իրենց իսկ մարզերում։ Լիլիթ Բեգլարյանի խոսքով մինչ փորձնական ծրագրի իրականացումը հիմնարդարական գործատուների եւ երիտասարդների շրջանում անցկացրել է հետազոտություն՝ նպատակ ունենալով պարզեցնել թե տվյալ մարզերի աշխատաշուկայում ինչ մասնագետների ասկանանացնել կա։

«Մեր ուսումնասիրությունը ցոյց տվեց, որ Ստեփանավանում պանրագործության, Գավառում՝ անասնաբուժության, Արդարասում՝ գինեգործության մասնագետների, իսկ Ալավերդիում՝ զյուղմեթնաների սարքավորումների շահագործման փականագործի պահանջարկ կա: Տեղերում համրիխելով տարբեր գործատուների հետ՝ կարողացանք գտնել այն գործընկերներին, որոնք պատրաստ են համագործակցել մեզ հետ: Գործատուն եւ քղթեցի տեսական մասով դասավանդողներգրավված են եղել ծրագրի ողջ գործընթացում. օրինակ՝ գործատուն Եռուղորդել, թե տվյալ պահին աշխատաշուկայում ինչպիսի ուսումնառության արդյունքներ են անհրաժեշտ, որպեսզի հետագայում այդ երիտասարդները կարողանան անցնել աշխատանքի», - մեզ հետ զրոյցում պատճում է Լիլիթը՝ հավելելով, որ Յարվա մեզ 115 երիտասարդ է պատրաստվել տարբեր մասնագիտությունների օջոն:

«Օրինակ՝ Գավառում սկսեցինք կրտսեր անասնաբույժներից՝ 1 խմբով, սակայն հընթացի հասկացանքը որ պահանջարկը բավականին մեծ է, եւ այս իրականացրեցինք 2 խմբի համար: Կերզին փուլում պարզվեց, որ կրտսեր անասնաբույժի կարիք կանաեւ Ստեփանավանուն: Ծրագրուու դա նախատեսված չէր, սակայն մեզ հաջողվեց որոշակի տնտեսումների հաշվին Ստեփանավանի համար եւս դասընթացմեր իրականացնել,»,- նշումն է ներ գրուցակիցը եւ ընդգծում, որ ընդհանուր առնամբ՝ 10-ից ավելի գործատուների հետ փոխընթառնան հուշագրեր են կնքվել, որի շրջանակում այդ կազմակերպությունները տրամադրել են իրենց լարորատորիաները եւ տարածքները՝ ԱՀՌՈ 60-70 տոկոսն աշխատանքային պայմաններում հրավարացնելու նաև առավելու:

«Սլղարում, երբ համագրոքակցությունը կմը Ստեփանավանի պանրագրության գրոքատուի հետ, վեցորեկ էլեմենտար պահանջի «Ըրքի» տեսակու եւ մո-

դուզմերը ծշակել դրա համար: Սակայն
մեկ տարի անց գործատուն որոշեց մե-
ծացնել իր բիզնեսը, որի արդյունքում
ավելի ընդարձակ կարճաժամկետ դա-
սընթացի մոդուլներ ունեցանք՝ կա-
րագ, կարճաշոր, յոգուրտ: Կամ օրի-
նակ՝ Գավառում մոդուլների ցանկը
սահմանափակ էր, այդ պատճառով
առաջին խնճի համար իրականացրե-
ցինք գործատունների կարեւորած դա-
սընթացը, սակայն հետագայում ավել-
յացրեցինք մոդուլներ, եւ առաջին
խումբը մյուս խնճերի հետ մեկտեղ յու-
րացրեց նաև ավելացված մոդուլները:
Այսինքն՝ այս անգամ ունկնդիրներն
առաջարկեցին ինչ դասընթաց անց-
նել: Որպես հաջողված փորձ կարելի է
դիտարկել նաև Գավառի պետական
գույքատնտեսանան որուեն օդինակոր

գլուխանստավազա թղթից Միլիավով երք «Ֆինանսներ» մասնագիտության ուսանողները մասնակցեցին կրտսեր անասնաբրույժի դասընթացին. ամռան ընթացքում նրանք գործատուի հետ սարեր էին բարձրանում եւ օրավար ծով աշխատում: Իսկ սա, ընդունեք սոցիալապես անապահով ընտանիք-մերի համար կարեւոր է: Այս ամենը մնեց ոգեւորություն և առաջարել համայնքի երիտասարդների շրջանում. նրանց մեջ կային նաև աղջիկներ, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, որը ցանկություն էր հայտնել դառնալ անասնաբրույժ: Այդ աղջկա դասավանդողները եւ նյուու ունենալիք ունեցին, որ նայուացնի դասընթացը», - ծրագրի մասնակիներն էնթրամասնում լի իհու:

իսկ մյուս մասը հիմնել է իր բիզնեսը: Օրինակ՝ Արարատի պետական քոլեջի մեր ունկնդիրը հիմնել է իր տնտեսությունը. նա գիտի է պատրաստում եւ այդպիսով գումար վաստակում: Նշեմ, որ կարծավանկետ դասընթացները բավականին ոգեւորել են քոլեջներին՝ հավելյալ գումար աշխատելու հնարավորության տեսանկյունից: Դրանք դիմել են «Գլորալ զարգացումներ» հիմնադրամին՝ խնդրանքով, որ այդ կարծավանկետ դասընթացները երաշխավորվեն պետության կողմից: Այդ նախատակով մենք էլ մեր հերթին դիմեցինք ԿԳՍՍ նախարարություն, որն անցյալ տարի երաշխավորեց դրանք», - ասում է Լիլիթը՝ վատահեցնելով, որ ներկայումս քոլեջները 3 տարի, առանց պետական գնումների գործընթացի մասնակցելու, կարող են հրականացնել այլ ռասունթագաներո:

Մեր զորոցակից խոսքով համապատասխան փորձագետը մշակել է ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսումնառության արդյունների ճանաչման առաջարկությունների փաթեթ, որը եւս ներկայացվել է ԿԳՍՍ նախարարություն։ Փաթեթում նշվել են այն օրենսդրական բացերը եւ փոփոխությունները, որոնք անհրաժեշտ է իրականացնել։ «Ոչ ֆորմալ եւ ինֆորմալ ուսումնառության ճանաչման փորձական ծրագիր ենք իրականացրել Արարատում, Ստեփանավանում եւ Գավառում ներառելով մեր ունկնդիրներին։ Գնահատողների համար կազմակերպակի ենք ուսումնացներ մշակ-



Նրա խոսքով՝ «Կողմղ Վիժն Դայաստան» կազմակերպությունը ծրագրում ընդգրկված չորս քոլեջներին տրամադրել է լարորատորիաներ, գույք եւ ժամանակակից սարքավորումներ, որը հնարավորություն է տվել ոչ միայն կարճաժամկետ դասընթացի գործնական մասն իրականացնել հաստատությունում, այլ եթե հետազայում շխազողվի գործել գործնկեր, տեսականը եւ գործնականը համադրելով՝ հենց քոլեջում իրականացնել դասընթացը։ Լիլիթը վստահեցնում է դասընթացի ավարտից հետո գործատուները եւ ուսումնական հաստատությունը սերտորեն համագործակցում են. օրինակ՝ Գեղարքունիքի մարզային անասնաբույժ գործատուն դասավանդում եւ Գավառի գյուղատնտեսական քոլեջում։ «Այսինքն սա գործատուներին կրթության ոլորտ բերելու ուղիղ ճանապարհ է։ Ծրագրի 115 մասնակցից 7-10-ը արդեն աշխատանք է գտնելու որոշներով՝ մեռ օրինատուների մոտ։

վել են արդյունքների ճամաշման գործիքներ եւ որոշ տեղերում հենց գործատուի մոտ, օրինակ՝ պանրի գործարանում, իրականացրել ենք այդ մասնագիտությունների համար պիլոտային արդյունքների ճամաչում, որն էլ հիմք է հանդիսացել մեր առաջարկությունների համար», - փաստում է Լիլիթը եւ հավելում, որ ծրագրի շրջանակում «Գլոբալ զարգացումներ» հիմնադրամն աջակցել է նաեւ ԱՀՌՈՒ հայեցակարգի մշակման աշխատանքներին, որն իրականացրել են Եվրոպական կրթական հիմնադրամը եւ «Վորլդ Վիժն Դայաստան» կազմակերպությունը: Հայեցակարգի նպատակը մասնագիտական կրթության եւ ուսուցման ոլորտում ԱՀՌՈՒ զարգացման ուղղված քաղաքականության անհրաժեշտ դաշտի ձեւավորումն ու ԱՀՌՈՒ աստիճանական ներդրման համար գործուրունների սահմանումն է:

379953111111111

ՑԱՆԿԱԿԱՆ ՏԵՐՎԱՆՐ

սկիզբն՝ էջ 10

Բոլորի պես Տերյանը եւս տեսնում էր այդ նորը: Այստեղ գրական զարգացումներին զուգընթաց կարեւոր է նաև Տերյանի քաղաքական գործունեության ուրվագիծը: Գիտակցական լյանքի առաջին հսկ քայլերից Տերյանը մտածել է իր ժողովրդին օգտակար լինելու մասին: Խիզախ միայնակների ժամանակն անցել էր, գործող ուժերին հիմնա միավորում էին կուսակցությունները: 1906-ին համախնների հետ նա դաշնում է ՀՅԴ անդամ, որւսերեն թարգմանում կուսակցության ծրագիրը եւ քարոզչական առաքելությամբ Պողոս Սակիմցյանի ընկերակցությամբ Մոսկվայից մեկնում Շիրակի գյուղերը: Սակայն մեկ ամիս անց հիմարափիված Վերադարձում են, որովհետեւ «Ծճերվարության» պահանջների համար դաշնակցական հայրուկների կողմից ծեփել էն: Տերյանը չի հուսահատվում՝ 1907-ին անդամագրվում է սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությանը: Մրանք հայտնի են որպես սաեցիֆիկներ, նրանց շարքերում կային շատ արժանավոր մարդիկ՝ Ալեքսանդր Մյամնիկյան, Աշոտ Չովիհաննիսյան, Դավիթ Անանուն, ովքեր նվիրված գործունեություն էին ծավալել հանուն հայրենիքի: Այս կազմակերպության շարքերուն Տերյանը մնում է մինչեւ 1915 թվականը: Դրանից հետո, արդեն 1917 թվականից նա դաշնում է կոմունիստական կուսակցության անդամ եւ Ազգությունների ժողովրդական կոմիսարիատում աշխատում կոմիսար Կառլամ Ավանեսովի տեղակալ: Պահպանվել է 1919-ի մայիսին գրած մի փաստաթուղթ, որով նա դուրս է գալիս Հայաստանի կոմունիստական կուսակցության (ՀԿ) շարքերից: Դուրս է գալիս, որովհետեւ խորապես հիմարափիված էր ՀԿ ղեկավար Գուրգեն Հայկունու դավադիր գործունեությունից, քանի ու վերջինս, Տերյանի պաշտոնը զբաղեցնելու ակնհայտ նպատակադրությունով, նրան անգամ կուսակցական ժողովների չեր հրավիրում: Բայց Տերյանը մնում է Ուստաստանի կոմունիստական կուսակցության (ՈԿ) շարքերում: Այսինքն Տերյանը հրաժեշտ է տալիս ոչ թե կուսակցությանը, այլ կուսակցության մեջ խցկած անախորժ մարդկան:

Նաեւ ավելացնեմ՝ Տերյանը երբեք չի եղել նեղմիտ, մոլեռանդ կուսակցական։ Որեւէ կուսակցության անդամ լինել նրա համար նախ նշանակում էր ծառայել իր ժողովրդին։ Եթե ինքը որպես կոմունիստ դրույթան տեր էր Մոսկվայում՝ նպաստել է ձերբակալված եւ մահապատժի դատապարտված ՀՅԴ հայտնի գործիչ Հակոբ Զավթիյանի ազատմանը։ Նույն կերպ օգնության ձեռք է մենակել նույն կուսակցության այնպիսի հայտնի դեմքերի, ինչպիսիք են Ուլրեն Դարբինյանը (Արտաշես Չիլինգարյան) եւ Լիպարիտ Խազարյանը։ Այդպես Դավիթ Անանունին եւ էլի մի քանիսին ազատել է Եւենտուկիի բանտից։ Սովոր տարիներ էին, նրանց նաեւ վճարովի թարգմանական աշխատանք է տվել, որպեսզի կարողանային ապրել։ Սա էր Տերյանը եւ բնական է, որ այսքան լայնախոհության համար Հայկունու եւ նրա նման նեղմիտ գործիչների կողմանց և սառող էր հայաջնեն։

Ահա իր դեմ ուղղված այս միջավայրից էր, որ Տեղյանը փորձեց հեռանալ Եւ 1919 թվականի հոկտեմբերին բռնեց արեւելյան ուղեւորության ճանապարհը։ Ըստ ոմանց՝ նա կարեւոր հանճճարարություն ուներ կատարելու։ Կա տեսակետ, որ գնում էր Միջին Ասիա՝ խորացած բռքախտից կումբսով բուժվելու։ Կա նաև տեսակետ, որ Պարսկաստանով պիտի անցներ Եվրոպա՝ Շվեյցարիա, դարձյալ բուժման ճպատակով։ Իսկ թե ինչու Պարսկաստանով, որովհետեւ արեւմուտքով կամ Ֆինլանդիայով նրա առթե ճանապարհ փակ էր։

Այդ հայութեն ժամանակներում տարեց-
տարի շատ բան էր փոխվում: Տերյանը հայ-

և նենիքի հանդեպ պատասխանատվություն ստանձնած քաղաքացիական նկարագիր ունեցող գրողի կերպար էր, ինչն արտացոլվել է ոչ միայն նրա գործունեության մեջ, այլև հոդվածներուն եւ պոեզիայում: «Դայ գրականության գալիք օրը» գեկուցնան մեջ Տերյանը հանդես էր գալիս որպես գրական նոր սերունդի առաջնորդ անցյալին մոտենալով իբրեւ ներկայի մարդ: «Ես պատկանում եմ ներկային», - հռչակում է նա եւ ավելացնում, որ ներձավոր անցյալի գրականությունն իր համար «մեռած է եւ օտար, ինչպես եւ այն նոր սերմանի համար, որին ես պատկանում եմ»: Եթե «Սրնշաղի անուրջմեր»-ն անցյալի ու ներկայի միջեւ քաշեց գեղարվեստի սահմանագիծ, ապա այս գեկուցուն այդ սահմանագիծն ամրապնդեց տեսական ու գեղագիտական դատողություններով: Տերյանը որոշակի-ացնում է իր հայեցակարգը. «Զաքտք է նոռանալ, որ վերջին տարիների ընթացքում հայ իրականության մեջ ծագել է մի նոր իստելիքնեցիա, մի նոր սերունդ, որին օտար չէ եվրոպական կուլտուրան...»:

